թէ տացէ Շապուհ զդուստրն իւր 'ի կնութեան: Նուեաց զայս բան կայսրն Թէոդոս, կալաւ զնա և ոչ եհան յերեսս իւր, այլ առաքեաց երկաթի կապանօք յաքսորս 'ի կղզի մի յՈվկիանոս ծովու, և մեռաւ անդ:

Արշակ և Վաղարշակ՝ որդիք Պապայ՝ թագաւորեցին ամս Ե: Որոց միոյն՝ հնազանդեցաւ կայսերն Յունաց, և միւսն՝ Շապհոյ Պարսից Արքային:

Խոսրով՝ ամս Ե. և 'ի պատերազմին կալան Պարսիկք և եղին յարգելանս:

Վռամշապուհ եղբայր Խոսրովու՝ հրամանաւ Շապհոյ Պարսկի եկաց ամս ԻԱ: Յազկերտ արքայ Պարսից՝ առաքեաց զորդի իւր զՇապուհ լինել թագաւոր Հայոց. որ եկաց ամս չորս: Նա յետոյ անարգեալ 'ի Հայոց՝ դարձաւ առ հայրն իւր, և եհաս անդ յաւուր մահուան հօրն իւրոյ Յազ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան